ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ
ՀԱՃԱԽԱԿԻ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

1. **Ի՞նչ է պարտատոմսը, ի՞նչ պարտատոմսեր են թողարկվում և ի՞նչ պայմաններով**
   - Պարտատոմսը պարտքային արժեթուղթ է, որն իրավունք է տալիս այն ձեռք բերողին սահմանված ժամկետում պարտատոմս թողարկողից (տվյալ դեպքում Ucom-ից) հետ ստանալ պարտատոմսի անվանական արժեքը եւ պարտատոմսի անվանական արժեքից ֆիքսված տոկոս:
   - Պարտատոմսերը ներդրումային տեսանկյունից գրավիչ այլընտրանք են բանկային ավանդին, քանի որ սովորաբար ապահովում են ավելի բարձր եկամտաբերություն և կարող են վաճառվել ցանկացած պահի՝ առանց ստացված/հաշվարկված եկամտի կորստի:

Թողարկվում են հետևյալ վավերապայմաններով պարտատոմսեր

Արժույթները	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
Եկամտաբերությունը	11%	7.5%
Անվանական արժեքը համապատասխան արժույթով	100,000 ՀՀ դրամ	100 ԱՄՆ դոլար
Ծավալը	250 մլն դրամ	5 մլն դոլար
Արժեթղթերի քանակը	2,500 հատ	50,000 հատ
Ժամկետը	36 ամիս	
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը	3 ամիս	

2. **Ե՞րբ է սկսվելու և որքա՞ն է տևելու տեղաբաշխումը**

Տեղաբաշխումը կսկսվի 2019թ.-ի մայիսի 16-ին և կտևի 60 օր

3. **Ինչպե՞ս կարելի է գնել**

Պարտատոմսերի տեղաբաշխողը ԱՐՄԵՆԲՐՈԿ ներդրումային ընկերությունն է Հասցե՝ ք. Երևան, Տիգրան Մեծ պ. 32/1, հեռ.՝ +37411 590000, +37410 538700: Ներկայացուցիչ կլինի նաև Ucom-ի սպասասրահում՝ ք. Երևան, Ամիրյան փող., 4/7 շենք, հեռ.՝ +37411 400400, +37410 538700:

4. **Ի՞նչ փաստաթղթեր է անհրաժեշտ ներկայացնել պարտատոմս ձեռք բերելու համար (ֆիզիկական անձանց դեպքում).**

- անձնագիր և սոցիալական քարտ կամ նույնականացման քարտ,
- ՀՀ որևէ բանկում բացված դրամային և դոլարային հաշվեհամարներ

5. **Ի՞նչ արժե մեկ պարտատոմսը**

Տեղաբաշխման ժամանակ պարտատոմսերը ներդրողներին են վաճառվում անվանական արժեքով՝ 100 000 ՀՀ դրամ և 100 ԱՄՆ դոլար, համապատասխանաբար, դրամային և դոլարային մեկ պարտատոմսի համար: Անվանական արժեքները հատուկ ընտրվել են այնպես, որ նույնիսկ սկսնակ ներդրողները հնարավորություն ունենան առաջին քայլերը կատարել արդյունավետ խնայողությունների բնագավառում և, մասնավորապես, արժեթղթերի շուկայում: Քանի որ տեղաբաշխումը տևելու է 60 օր, գները 60 օրվա ընթացքում կփոխվեն: Գները ըստ օրերի ստորև ներկայացված են, որոնք հրապարակված են ԱՐՄԵՆԲՐՈԿ-ի և Ucom-ի կայքերում (www.armenbrok.am, www.ucom.am):

6. **Ե՞րբ է գործարքը համարվում կայացած և ի՞նչ հավաստող փաստաթուղթ է ներդրողին տրամադրվելու գործարքից հետո**
   - Պարտատոմսերը ձեռք բերված կհամարվեն հայտը ներկայացնելուց և համապատասխան գումարը հաշվին մուտքագրելուց հետո:
   - Գործարքից հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում կտրամադրվի քաղվածք արժեթղթերի հաշվից:

7. **Հնարավո՞ր է պարտատոմսերը վաճառել մինչև դրանց մարման ժամկետը**

Տեղաբաշխման ավարտից հետո պարտատոմսերը ցուցակվելու են Հայաստանի Ֆոնդային բորսայում, որտեղ ցանկացած աշխատանքային օր ներդրողը կարող է վաճառել իր պարտատոմսերը ներդրումային ծառայություններ մատուցող անձանց միջոցով, ինչպիսին է նաև ԱՐՄԵՆԲՐՈԿ-ը, որը գործելու է որպես Յուքոմ ընկերության պարտատոմսերի շուկա ստեղծող (ապահովելու է դրանց անընդհատ գնանշումները և բավարարելու առք/վաճառքի հայտերը):

8. Ինչպե՞ս է հնարավոր վաճառել պարտատոմսերը

Արժեթղթերի սեփականատերերը կարող են վաճառել պարտատոմսերը հետևյալ ընթացակարգով.

- Դիմել որևէ արժեթղթերի բրոքերի՝ ներկայացնելով վաճառքի հայտ (մասնագիտացված ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների ցանկը ներկայացված է բորսայի կայքում՝ www.amx.am),
- Բրոքերը հայտը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում կկատարի պատվերը՝ բորսայի համակարգի միջոցով,
- Պատվերը կատարելուց հետո հաճախորդին կտրամադրի արժեթղթերի հաշվից քաղվածք և գործարքի վերաբերյալ հաշվետվություն,
- Վաճառքից ստացված գումարը կփոխանցվի հաճախորդի կողմից նշված բանկային հաշվին:

Յուրաքանչյուր օր ժամը 15:30-ից հետո բորսայի կայքում կհրապարակվեն տվյալ օրվա գների մասին տեղեկություններ:

9. Ի՞նչ ծախսեր կառաջանան պարտատոմսերը գնելու կամ վաճառելու դեպքում

Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսեր ձեռք բերելու ժամանակ որևէ ծախս չի առաջանում:

Պարտատոմսերը մարման ժամկետից շուտ վաճառելու դեպքում կիրառվում են բրոքերային ընկերության կողմից արժեթղթերի վաճառքի համար նախատեսված միջնորդավճարները:

10. Արդյո՞ք հարկվում է պարտատոմսերից ստացվող եկամուտը

Կորպորատիվ պարտատոմսերից ստացվող եկամտից ֆիզիկական անձանց դեպքում գանձվում է 10% եկամտային հարկ: